ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անունը ազգանունը** ՝Աշոտ Վարդանյան
2. **Զբաղեցրած պաշտոնը**՝ ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի լիցենզավորման բաժնի պետ
3. **Գործուղման վայրը/ժամկետը**՝ Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2022 թ. հոկտեմբերի 11-14
4. **Հրավիրող կողմը**՝ ԱՊՀ մասնակից պետությունների ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման հարցերով հանձնաժողով

- Գործուղման նպատակը՝ Մասնակցել ԱՊՀ մասնակից պետությունների ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման հարցերով հանձնաժողովի կողմից անցկացվող «Ռադիոակտիվ աղբյուրների տարանցիկ փոխադրման հետ կապված ԱՊՀ մասնակից պետությունների միջև տեղեկատվության փոխանակումը» խորագրով աշխատանքային հանդիպմանը
- **Քննարկված թեմաները** - Աշխատանքային հանդիպման ընթացքում քննարկվել են.

✓ «Ռադիոակտիվ աղբյուրների փոխադրման վերաբերյալ ԱՊՀ մասնակից պետությունների միջև տեղեկատվական համագործակցության մասին» համաձայնագրի կետերի իրականացման գործողությունների ծրագրերը,

✓ Համաձայնագրի շրջանակներում տվյալների փոխանակման գործընթացների իրականացումը՝ հաշվի առնելով ԱՊՀ մասնակից պետությունների կողմից օգտագործվող հատուկ ծրագրային ապահովման միջոցները և տեղեկատվության անվտանգության ապահովման նկատմամբ սահմանվող պահանջները,

✓ Ռադիոակտիվ աղբյուրների փոխադրման վերաբերյալ ԱՊՀ մասնակից պետությունների միջև տեղեկատվության փոխանակման ծավալները ու պայմանները (հայտերի ու հաշվետվությունների ձևերը):

5. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր**

- Աշխատանքային խմբի հանդիպումը տեղի ունեցավ «Ռոսատոմ» պետական կորպորացիայի Տեխնիկական ակադեմիայի մասնաշենքում : Հանդիպմանը մասնակցել են Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Տաջիկստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության «Ռոսատոմ», «Ռոսատոմ» պետական կորպորացիայի «Ռադիոակտիվ թափոնների կառավարման միասնական պետական համակարգի ձևավորում», «Ռադիոակտիվ թափոնների կառավարման ազգային օպերատոր» ընկերությունների, ԱՊՀ գործադիր կոմիտեի և հանձնաժողովի քարտուղարության ներկայացուցիչներ:
- Ողջույնի խոսքով և ԱՊՀ անդամ երկրների միջև տեղեկատվության փոխանակման համար Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմնում

(այսուհետ՝ Կապի կետ) առկա վիճակի ու տարվող աշխատանքների վերաբերյալ ելույթ ունեցավ «Ռադիոակտիվ թափոնների կառավարման միասնական պետական համակարգի ձևավորում» նախագծային գրասենյակի ղեկավար Ա.Ն.Դորոֆեևը:

- Սեմինարի ընթացքում ելույթ ունեցան՝

✓ «Ռադիոակտիվ նյութերի և ռադիոակտիվ թափոնների պետական հաշվառման և վերահսկման համակարգը ՌԴ-ում» թեմայով - «Ռադիոակտիվ թափոնների կառավարման ազգային օպերատոր»-ի տեղեկատվական վերլուծական կենտրոնի պետ Մ.Վ. Ստարկովան,

✓ «Ռադիոակտիվ թափոնների կառավարման միասնական պետական համակարգի ստեղծումը և զարգացումը Ռուսաստանում - առաջին տասը տարիների արդյունքները» թեմայով - «Ռադիոակտիվ թափոնների կառավարման ազգային օպերատոր» Դաշնային պետական միասնական կազմակերպության միջազգային և գիտական կազմակերպությունների հետ համագործակցության վարչության տնօրեն. Վ.Ի. Իգինը:

- Սեմինարի ընթացքում քննարկվեցին մասնակից երկրներում Համաձայնագրի շրջանակներով նախատեսված միջոցառումների և կատարված աշխատանքների վերաբերյալ զեկույցներ:
- Իմ կողմից ներկայացված ելույթում բարձրացված խնդիրները, որոնք վերաբերվում էին Համաձայնագրի շրջանակներում տվյալների փոխանակման գործընթացների տեխնիկական իրականացմանը՝ հաշվի առնելով ԱՊՀ անդամ երկրներում կիրառվող հատուկ ծրագրային ապահովման առանձնահատկություններն ու տեղեկատվական անվտանգության պահանջները, ինպես նաև Համաձայնագրի մասնակից պետությունների Կապի կետերի միջև տեղեկատվության փոխանակման համար տեղեկատվական անվտանգության պահանջներին համապատասխանող կապի միջոցների որոշմանը՝ ընդունվեցին ի գիտություն և ամրագրվեցին սեմինարի արձանագրության մեջ:

6. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

- Համաձայնագրի շրջանակներում շարունակել և ընդլայնել համագործակցությունը տեղեկատվության փոխանակման գործընթացների իրականացման մասով՝ հաշվի առնելով ԱՊՀ անդամ մասնակից պետությունների կողմից օգտագործվող հատուկ ծրագրային ապահովման միջոցները և տեղեկատվության անվտանգության ապահովման նկատմամբ սահմանված պահանջները:
- Ի գիտություն ընդունվեց ԱՊՀ անդամ երկրների միջև տեղեկատվության փոխանակման համար Ռուսաստանի Դաշնության Կապի կետում տարվող աշխատանքների վերաբերյալ «Ռադիոակտիվ թափոնների կառավարման միասնական պետական համակարգի ձևավորում» նախագծային գրասենյակի ղեկավար Ա.Ն.Դորոֆեևի տեղեկատվությունը:

- Համաձայնագրի շրջանակներում մասնակից պետություններին հանձնարարվեց թարմացնել իրենց երկրների Կապի կետերում տեղեկատվության փոխանակման համար պատասխանատու անձանց կոնտակտային տվյալները:
- Ռուսաստանի Դաշնության «Ռադիոակտիվ թափոնների կառավարման ազգային օպերատոր»-ի տեղեկատվական վերլուծական կենտրոնին հանձնարարվեց ԱՊՀ անդամ պետությունների միջև տեղեկատվական փոխգործակցության գործընթացի մասնակիցների համար պատրաստել սեմինարի ծրագիր՝ «Ռադիոակտիվ աղբյուրների անդրսահմանային տեղափոխումներին վերաբերվող հարցերի մասին» թեմայով և տրամադրել այն մասնակից պետություններին:
- Կարճ կիսատրոհման պարբերություն ունեցող ռադիոնուկլիդների վրա հիմնված փակ ռադիոիզոտոպային ճառագայթման աղբյուրների մատակարարման պարագայում նախատեսել հնարավորություն, որպեսզի ռադիոակտիվ աղբյուրների տեղաշարժի վերաբերյալ նախնական ծանուցումը և առաքումը իրականացվեն միաժամանակ:
- ԱՊՀ անդամ պետությունների իրավասու մարմիններին/ Կապի կետերին առաջարկվեց թեստային ռեժիմով մշակել տեղեկատվության փոխանակման ընթացակարգերը:

7. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

- Համաձայնագրի իրականացման շրջանակներում շարունակել և ընդլայնել տեղեկատվության փոխանակման համակարգի ստեղծման գործնական քայլերը՝ հաշվի առնելով «Ռադիոակտիվ աղբյուրների տեղաշարժի մասին տեղեկատվության փոխանակման միասնական ընթացակարգ և ձևեր» փաստաթղթի դրույթները:
- Աշխատանքային խմբի հաջորդ նիստն անցկացնել 2023 թվականի երկրորդ եռամսյակում՝ ամսաթիվը և վայրը կհաստատվեն ավելի ուշ:
- Սեմինարի մասնակիցների հաշվետվությունները/շնորհանդեսները տեղադրել հանձնաժողովի www.sng-atom.com կայքում:

Աշոտ Վարդանյան

17/10/2022թ.